ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

<<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10.07.2015թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների զարգացման հեռանկարների մասին:

/Զեկուցող՝ Ս.Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ ԻՄ-ի 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:

/Զեկուցող՝ Ա.Յ.Դավթյան/

3. Հաշվետվություն ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2014-2015 ուստարվա կատարած աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ Ա.Վ. Յուցուլյան/

4. ԵՊՀ ԻՄ-ի մագիստրոսի կրթական ծրագրով առկա և բակալավրի կրթական ծրագրերով հեռակա ուսուցման 2015թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

/Զեկուցող՝ Ս.Ա. Առաքելյան/

5. Տեղեկատվություն ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ 2015-2016 ուստարվա ընդունելության մասին:

/Զեկուցող՝ Ս.Ա. Առաքելյան/

6. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2015թ. հարցման արդյունքների մասին:

/Զեկուցող՝ Ա.Վ.Յուցուլյան/

7. ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների մասին:

/Զեկուցող՝Ա. Յ. Դավթյան/

8. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների զարգացման հեռանկարների մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա կարևորեց ԵՊՀ ԻՄ ֆակուլտետներում անցկացված զարգացման ծրագրերի քննարկումը, արտաքին շահեկիցների շահերի հաշվառմամբ պահանջարկ վայելող մասնագիտությունների օպտիմալ ընտրությունը: Նա ուշադրություն հրավիրեց նաև ամբիոնային աշխատանքների և պրակտիկաների կազմակերպման արդյունավետության բարձրացման վրա:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը մանրակրկիտ ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ֆակուլտետների զարգացման հեռանկարները:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը գործում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնադրման շրջանից: Ներկայում ֆակուլտետում բակալավրական ուսուցում է կազմակերպվում հետևյալ հինգ մասնագիտական կրթական ծրագրերով՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Մանկավարժություն և հոգեբանություն» /2015-2016 ուստարվանից՝ Հոգեբանություն/ «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն»: Ժամանակի պահանջներին համահունչ ֆակուլտետի մասնագիտությունները փոխվել են, ինչպես նաև ներդրվել են նորերը: Հումանիտար գիտությունների ֆակուլտետը այսօր հանդիսանում է Տավուշի մարզի մանկավարժական կադրերի պատրաստման գլխավոր կենտրոնը: Շրջանավարտների զգալի մասը աշխատում է մանկավարժության ասպարեզում: Սակայն քիչ չեն նաև ոստիկանական, ռազմական, մշակույթի ոլորտներում աշխատողները:

Մասնագիտություններից երկուսը՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», ունեն գերազանցապես հայագիտական ուղղվածություն: Ազգային ինքնագիտակցության բարձրացման և հայրենի հոգևոր արժեքների պահպանման ու զարգացման առումով դրանք կարևոր առաքելություն են իրականացնում:

Վերջին տարիներին նվազել է «Ֆրասերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ կրթություն ստանալ ցանկացողների թիվը, ինչը պայմանավորված է ֆրանսերենով ուսուցում կազմակերպող դպրոցների նվազումով: Ֆրանսերեն լեզու դասավանդում են մարզի միայն վեց դպրոցում: Դրա փոխարեն աճում է «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության

դիմորդների թիվը: Այդ պատճառով ֆրանսերեն լեզուն իսպառ չվերացնելու և ֆրանսերեն սովորած սակավ դիմորդներին չկորցնելու համար ավելի նպատակահարմար է կազմակերպել ուսուցում մեկ մասնագիտությամբ՝ օտար լեզուներ, թե անգլերեն, թե ֆրանսերեն լեզուներով: Զուգահեռաբար խորացված կուսուցանվեն և ֆրանսերենը, և անգլերենը՝ առանց այդ լեզուներից որևէ մեկին առաջնություն տալու:

Տարեցտարի նվազում է նաև «Մանկավարժություն և Հոգեբանություն» մասնագիտության դիմորդների թիվը: Հաշվի առնելով մարզի դպրոցներում առկա դասվարների պահանջարկը՝ նպատակահարմար է «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության փոխարեն ներդնել «Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/» մասնագիտական կրթական ծրագիրը:

Իրավական պետություն կերտելու ճանապարհին կարևորվում է իրավական պատշաճ գիտելիքներով զինված քաղաքացու ձևավորումը: Այդ հարցում պակաս կարևոր չէ նաև երկրի իրավապահ համակարգում խոր մասնագիտական գիտելիքների տիրապետող կադրերի առկայությունը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր մարզի իրավապահ համակարգում, ինչպես նաև համայնքների զանազան ենթակառուցվածքներում առկա է որակյալ և արհեստավարժ իրավաբանի պահանջարկ: Նշյալ բնագավառները իրավունքի մասնագետներով համալրելու նպատակով առաջարկում եմ ֆակուլտետի կառուցվածքում ներդնել «Իրավագիտություն» բակավալրական մասնագիտական կրթական ծրագիր:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ազգային տնտեսության և տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման միտումների ու այդ ճանապարհին ծագող խնդիրների մշտադիտարկումը, մասնավորապես, տարածաշրջանային աշխատաշուկայի

պահանջարկի, ինչպես նաև ֆակուլտետի շրջանավարտների կողմից, նշված պահանջարկի բավարարման մակարդակի ուսումնասիրությունը, փաստում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի կառուցվածքում գործող «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության կարևորությունը (արդյունավետությունը): Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկը առավել լիարժեք բավարարելու նպատակով ֆակուլտետում գործող «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնը մշտապես աշխատանքներ է տանում թողարկվող մասնագետների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնման և արդիականացման ուղղությամբ:

Այս ամենի հետ մեկտեղ նշված ուսումնասիրությունները ի հայտ են բերել տարածաշրջանային աշխատաշուկայում առկա կարևոր խնդիր: Այն է, որ այդտեղ մասնագիտացված կառավարիչների մեծ պահանջարկ կա, ինչպես հանրային կառավարման, այնպես էլ բիզնեսի ասպարեզում: Ուստի կարևոր ենք համարում լրացնել այս բացը «Կառավարում» մասնագիտության կրթական ծրագրի իրականացման միջոցով, որի համար ամբիոնն ունի համապատասխան ներուժ:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետը շրջանավարտներ է թողարկում 2 մասնագիտություններով. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, Քարտեզագրություն և կադաստրային գործ: ԻԿՄ մասնագիտությունը 2013-14 ուստարում փոխարինել է ԿՄՖ մասնագիտությանը, /ավարտական քննություններ կհանձնեն վերջին 13 շրջանավարտները: 2013-14 ուստարում ԿՄՖ մասնագիտությամբ եղել է 12 շրջանավարտ/: 2013-14 ուստարում ԻԿՄ մասնագիտությամբ ընդունվել է 31 դիմորդ, որից 7-ը մեկնել է ՀՀ ԶՈՒ ծառայության:

2014-15 ուստարում ընդունվել են 26 հոգի, որից 4-ը մեկնել ՀՀ ԶՈՒ: Ընդունելությունը ցույց է տալիս, որ ընտրվել է հետաքրքրություն ներկայացնող և պահանջարկ ունեցող մասանգիտություն:

Չնայած ֆակուլտետը հագեցած է համակարգչային լաբորատորիաներով, այնուամենայնիվ գտնում ենք, որ մասանգիտության կատարելագործման ոլորտում պետք է հետամուտ լինել հետևյալին.

1. Պրակտիկաների կազմակերպումը այդ բնագավառում աշխատող որևէ կազմակերպությունում, ինչպես նաև, պրակտիկ խնդիրներին վերաբերող հարցերով որոշ դասասախոսություններ լսելով:
2. Ընթացք տալ լրացուցիչ պարապմունքներին և զեկուցումներին ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն:
3. Մշակել գիտական թեմաներ և մասանկցել այդ թեմաների բաշխման մրցույթներին:
4. Մշտական կապ հաստատել արտաքին շահակիցների հետ:
5. Ակտիվացնել կապը մարզի դպրոցների հետ, լավագույն ձևով ներկայացելու ԲՈՒՀ-ն ու մասնագիտությունները:

2014-15 ուստարում ՔԿԳ- փոխարինել է Էկոլոգիական քիմիա մասնագիտությանը: ընդունվել են 7 հոգի, որից 1-ը տեղափոխվել է հեռակա ուսուցման բաժին, 1-ը մեկնել ՀՀ ԶՈՒ: Նախնական տվյալներով 2015-16 ուսստարում ՔԿԳ մասնագիտության գծով կլինեն 20-ից և ավելի ուսանողներ, որը խոսում է մասնագիտության հանդեպ հետաքրքրության և պահանջարկի մասին: Նշենք, որ այստեղ դեռևս շատ անելիքներ կան:

1. Անհրաժեշտ է ստեղծել նշված մասնագիտության լաբորատորիա, հագեցած ժամանակակից սարքավորումներով, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան մասանգիտության

համակարգում պրակտիկ աշխատանքներ կատարելու. չափումներ, քարտեզագրում, հողի շերտերի որակի ստուգում և այլն:

2. Ընթացք տալ լրացուցիչ պարապմունքներին և զեկուցումներին ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն:
3. Մշտական կապ հաստատել արտաքին շահակիցների հետ
4. Ակտիվացնել կապը մարզի դպրոցների հետ, լավագույն ձևով ներկայացելու ԲՈՒՀ-ն ու մասնագիտությունները:

Կիրառական արվեստի ֆակուլտետ

ԵՊՀ ԻՄ Կիրառական արվեստի ֆակուլտետը կազմավորման սկզբնական օրվանից իրականացնում է ընդունելություն <<Կիրառական արվեստ>> , իսկ սկսած 2014թ.-ից նաև <<Դիզայն>> մասնագիտություններով:

Տարիների ընթացքում և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներից ելնելով դիմորդները նախընտրում են ձեռք բերել <<Դիզայն >> մասնագիտությունը, որի վկայությունը վերջին երկու տարիների արդյունքներն են: Նշված երկու մասնագիտությունների համար էլ սահմանված են նույն ընդունելության քննությունները, ինչը ցնցում չի առաջացնի դիմորդների շրջանում, հետևաբար նաև նրանց թվի նվազում չի կանխատեսվում: Ֆակուլտետի կառուցվածքում նշված երկու մասնագիտություններով ընդունելություն կատարելը համարելով անարդյունավետ առաջարկում եմ.

- ✓ 2016թ.-ից ընդունելությունը իրականացնել միայն <<Դիզայն >> մասնագիտությամբ
- ✓ վերանայել <<Դիզայն >> մասնագիտության կրթական ծրագիրը՝ լրացնելով այն <<Կիրառական արվեստ>> մասնագիտության կրթական ծրագրի մասնագիտական որոշ առարկաներով

- ✓ ստեղծել նոր լաբորատորիա – արվեստանոց <<Դիզայն նախագծում>> և <<Մակետավորում և աշխատանք նյութով>> կրթական մոդուլների արդյունավետ դասավանդման համար
- ✓ միավորել <<Տեքստիլ>> երեք արվեստանոցները մեկ՝ <<Գործվածքաբանության>> արվեստանոցի
- ✓ ստեղծել <<Հագուստի մոդելավորում և ինտերիերի աքսեսուարներ>> արվեստանոց
- ✓ վերապրոֆիլավորել ֆակուլտետում դասավանդող որոշ դասախոսների՝ տալով ուղղվածություն <<Դիզայն>> մասնագիտացմամբ:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ կիրառական արվեստի ֆակուլտետում, տեքստիլի մասնագիտացմամբ մեր ուսանողները ունեն լուրջ ձեռքբերումներ, և որ անհրաժեշտ է աշխատել մասնագիտացումների համադրության վրա, որը կարող է հանգեցնել լուրջ որակական առաջընթացի, ինչպես նաև կարևորեց հանրակրթական բլոկում դասավանդող դասախոսական կազմի ճիշտ ընտրությունը: Նա առաջարկեց նաև ֆակուլտետում քննարկել ֆակուլտետի վերամասնագիտացման հարցը, մասանավորապես առաջարկեց քննարկել <<Դիզայն և զբոսաշրջություն>> մասնագիտացման ներդրման հնարավորությունը:

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ֆակուլտետների ղեկաններ և ամբիոնների վարիչներ:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հստակեցնել առաջարկվող մասնագիտությունների ցանկը և հիմնավորումներով ներկայացնել առաջիկա գիտխորհրդի քննարկմանը:

Որոշեցին

Որոշում 10/1

Հանձնարարել ուսումնամեթոդական վարչությանը հստակեցնել առաջարկվող մասնագիտությունների ցանկը և ներկայացնել առաջիկա գիտխորհրդի քննարկմանը:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> ԵՊՀ ԻՄ-ի 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում հարցի վերաբերյալ լսվեց ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Ց. Դավթյանի հաղորդումը: Նա մասնավորապես նշեց, որ առարկայական փաթեթների ներդնումը ԵՊՀ ԻՄ-ում, ինչպես նաև ռոտացիաների առավել թափանցիկ դարձնելը հանգեցրել է ուսանողների շրջանում ակտիվության աճին, որն էլ իր հերթին հանգեցրել է առաջադիմության 8,4 % աճի: Թվային տվյալները տրված են հավելված 1-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Վ. Ցուցուլյանը և այլոք:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանը կարևորեց առարկայակն փաթեթների ներդրումը մասնաճյուղում, նշեց որ այդ քայլի տրամաբանական շարունակությունն է լինելու կազմված փաթեթների որոկական փոփոխությունը: Նա կարևորեց նաև ռոտացիաների առավել օբյեկտիվ անցկացման խնդիրը:

Որոշեցին

Որոշում 10/2

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երրորդ՝</u> Հաշվետվություն ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2014-2015 ուստարվա կատարած

աշխատանքների մասին լսեցին ՄԿՈԱ բաժնի պետ Ա. Վ. Ցուցուլյանի հաղորդումը: Հաշվետվությունը կցվում է ամբողջությամբ: /Հավելված 2/

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Ժ. Հովհաննիսյանը: Ելույթ ունեցողները արժևորելով ՄԿՈԱ բաժնի կատարած աշխատակքը, նշեցին որ կատարվել է հասկայակն աշխատանք, սակայն կան որոշ թերություններ, մասնավորապես առկա է պատասխանատվության հստակեցման և վերաբաշխման խնդիրը, ինչպես նաև բաժնի կատարած աշխատանքների արդյունքների ներդրման, կատարողականի և վերահսկման մեխանիզմների ոչ հստակությունը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանը նշեց որ բաժնի յուրաքանչյուր կատարած աշխատանքի արդյունավետությունը պետք է զգա մասնաճյուղի յուրաքանչյուր ուսանող: Նա առաջարկեց բացթողումները լրացնելու համար աշխատել հետևյալ մեխանիզմով.

- Կատարած վերլուծության արդյունքում բաժնի կողմից տվյալ ստորաբաժանման աշխատանքում հայտնաբերված թերացումները տնօրենի օգնականի միջոցով գրավոր ներկայացվում է տնօրինության քննարկմանը:
- Տնօրինության նիստում քննարկվելուց հետո տնօրենը տալիս է կոնկրետ հանձնարարակն տվյալ ստորաբաժանմաը հայտաբերված խնդիրը կոնկրետ ժամանակահատվածում լուծելու համար:
- ՄՈԱԿ բաժինը ստուգում է կատարված աշխատանքը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը կրևորեց նաև ՄԿՈԱ բաժնի կողմից ղեկավարվող ԵՊՀ ԻՄ-ի հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքները, շնորհակալություն հայտնեց այն աշխատակիցներին որոք

տքնաջան աշխատում են հավատարմագրման գործընթացի արդյունավետ իրականացման համար:

Որոշեցին

Որոշում 10/3

ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2014-2015 ուստարվա կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Օրակարգի չորրորդ՝ ԵՊՀ ԻՄ-ի մագիստրոսի կրթական ծրագրով առկա և բակալավրի կրթական ծրագրերով հեռակա ուսուցման 2015թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ 2015թ. մասնաճյուղում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ ավարտել են թվով 192 ուսանող, որից 188-ն հեռակա ուսուցմամբ (1-ը նախորդ տարիներից), իսկ մագիստրոսական ուսուցմամբ՝ 4 ուսանող: Մասնաճյուղում վերոնշյալ կրթական ծրագրերով գերազանցության դիպլոմ չեն ստացել: Նախորդ տարի մասնաճյուղում առկա ուսուցմամբ գերազանցությամբ ավարտել են 34 ուսանող /192 ուսանողից/: Այս տարի առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտ չենք ունեցել: Հավելված 3-ում աղյուսակի տեսքով, ըստ մասնագիտությունների, ներկայացված է 2014-2015թթ. շրջանավարտների թիվը:

Նա նշեց նաև, որ անհրաժեշ է ուշադրություն դարձնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում առկա դիտողություններն ու առաջարկությունները: /ԵՊՀ ԻՄ-ի 2014-2015 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների ամփոփումը հավելված 4-ում/: Մասնավորապես հանձնարարեց ուսումնամեթոդական վարչությանը ապահովել ցուցադրական

նյութերով, հատկապես քարտեզներով իրականացվող դասերին ցուցադրական նյութերի առկայությունը:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Պ. Ասիլբեկյանը:

Որոշեցին

Որոշում 10/4

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի հինգերորդ՝ Տեղեկատվություն ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ 2015-2016 ուստարվա ընդունելության մասին հարցի վերաբերյալ լսվեց տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ չնայած պաշտոնական տվյալները հրապարակվելու են հուլիսի 15-ին, հայտնի են ԵՊՀ ԻՄ ընդունվող ուսանողների նախնական թվերը: ԵՊՀ ԻՄ դիմած 209 դիմորդներից 7.5 և բարձր միվորներ ստացել են 165 դիմորդ:

Նա կատարեց համառոտ համեմատական վերլուծություն 2014-2015 ուստարվա համեմատ. ունենք դիմորդների աճ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտությամբ(21), կադաստրային գործ մասնագիտացմամբ(23), հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ(15), օտար լեզու և գրականություն/անգլերեն/(28) մասնագիտացմամբ, ընդունվող դիմորդների թիվը անփոփոխ է հոգեբանություն մասնագիտությամբ(14), ինչպես նաև չի փոխվել ընդունվող ուսանողների թիվը կիրառական արվեստի ֆակուլտետում(21), ունենք ուսանողների թվի նվազում տնտեսագիտության տեսություն(16), սերվիս(8) և պատմություն(12), օտար լեզու և գրականություն/ֆրանսերեն/(7) մասնագիտություններով: Անհանգստացնող է

այն փաստը, որ Տավուշի մարզի դիմորդներից շատ են հայոց լեվի քննությունից 7.5 միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, դիմորդների քանակի էական ավելացման համար անհրաժեշտ է կատարել ԵՊՀ ԻՄ-ի ներքին և արտաքին շահակիցների կարծիքների ճշգրիտ ուսումնասիրություններ, ակտիվացնել դպրոցների հետ տարվող աշխատանքները, ինչպես նաև օգտագործել ուսանողների ուժերը այս ուղղությամբ կատարվող աշխատանքներում:

Որոշեցին

Որոշում 10/5

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի վեցերորդ՝</u> ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2015թ. հարցման արդյունքների մասին հարցի վերաբերյալ լսեցին ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանի զեկույցը ներկայացվում է ամբողջությամբ /Հավելված 5/:

Որոշեցին

Որոշում 10/6

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի յոթերորդ՝</u> ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների մասին լսվեց Ա. Ց. Դավթյանի հաղորդումը: Նշվեց, որ ուսումնամեթոդական վարչությունը 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակացույցի համաձայն փետրվար ամսում բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ ուսանողների շրջանում անցկացրեց մասնաճյուղի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ

ուսանողական հարցումներ՝ 2014-2015 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասավանդման վերաբերյալ, որոնք նպատակ ունեն նպաստելու պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման կարողությունների և մոտեցումների կատարելագործմանը: Հարցումների արդյունքները մշակման համար ուղարկվել են ԵՊՀ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոն:

Ուսանողական հարցման արդյունքների մշակված տվյալները, համաձայն ԵՊՀ ԻՄ <<Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ>>-ի, ուսումնամեթոդական վարչությունը համապատասխան ձևաչափերով (ֆակուլտետի, ամբիոնի և առանձին դասախոսի համար) ներկայացվել է ֆակուլտետների դեկաններին՝ արդյունքները համապատասխան ամբիոնների, այնուհետև ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում քննարկելու համար:

Ուսանողական հարցումներն անց են կացվել բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ առաջինից երրորդ կուրսերում, քանի որ 2014-2015 ուսումնական տարում մասնաճյուղը առկա ուսուցմամբ չուներ ավարտական կուրսեր: Հարցումների ընթացքում դեկանատները ակտիվորեն աջակցել են տարվող աշխատանքներին:

Գնահատման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակի ձևով /Հավելված 6/:

Արտահայտվեցին – ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, ամբիոնի վարիչներ, և այլոք: Ելույթ ունեցողները կարևորեցին ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքների քննարկումն ամբիոններում և կատարվող եզրակացությունները:

Որոշեցին

Որոշում 10/7

Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

Լսեցին – ԵՊՀ ԻՄ- ի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 10/8

Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կազմը համաձայն հավելված 7-ի:

Լսեցին – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի <<Բարբառագիտության հիմունքներ>> ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու հարցը:

Նշվեց, որ <<Հայոց լեզվի և գրականության >> ամբիոնի նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի <<Բարբառագիտության հիմունքներ>> ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու համար: Ձեռնարկը գրախոսվել է ամբիոնում և արժանացել է բարձր գնահատականի:

Արտահայտվեցին – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Ավագյանը, բ.գ.թ. Ա. Սարհատյանը,:

Նշվեց, որ Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի <<Բարբառագիտության հիմունքներ>> ուսումնամեթոդական ձեռնարկը համապատասխանում է պահանջվող բոլոր նորմերին: Ձեռնարկը նախատեսված է բակալավրի կրթական ծրագրով

սովորող ուսանողների համար, ինչպես նաև կարող է օգտակար լինել բարբառագիտությամբ և հայոց լեզվի պատմության հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար:

Որոշեցին

Որոշում 10/9

Երաշխավորել հրատարակման Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի <<Բարբառագիտության հիմունքներ>> ուսումնամեթոդական ձեռնարկը:

Լսեցին - <<ԵՊՀ ԻՄ-ի սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը>> հաստատելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 10/10

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը համաձայն հավելվածի 8-ի:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ